



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

N 362-Ա

18 ապրիլ 2019 թ.

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՆՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 2019-2020 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՓՈՐՁՆԱԿԱՆ ԿԱՐԳ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 703-Լ որոշմամբ հաստատված ՀՀ կրթության և գիտության նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետով՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Հաստատել Երևան քաղաքի հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություններում 2019-2020 ուսումնական տարում առաջին դասարան ընդունելության փորձնական կարգը՝ համաձայն հավելվածի:

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Invalid signature

X

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Signed by: HARUTYUNYAN ARAYIK 1209790378

ՓՈՐՁՆԱԿԱՆ ԿԱՐԳ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 2019-2020 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ

1. Երևան քաղաքում երեխայի ընդգրկումը հանրակրթական ուսումնական հաստատության առաջին դասարան կատարվում է հայտագրման միջոցով, որն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից սպասարկվող «Սովորողներին դպրոց հայտագրելու էլեկտրոնային համակարգ»-ի (այսուհետ՝ համակարգ) միջոցով:
2. Ծնողներն իրենց դպրոցահասակ երեխաներին հայտագրում են մայիսի 15-ից: Հայտագրումը համարվում է կատարված համակարգում «հայտը հաստատվել է» հաղորդագրությունը ստանալու պահից: Տեղերը զբաղեցվում են ըստ կատարված հայտագրումների ժամանակագրական հերթականության՝ ինքնաշխատ եղանակով:
3. Հայտագրումից հետո ծնողը դպրոց է ներկայացնում՝ դիմում՝ ուղղված տնօրենին, բնակչության պետական ռեգիստրում հաշվառված լինելու մասին տեղեկանք, ծննդյան վկայականի կամ անձնագրի բնօրինակը և պատճենը (տնօրենի «Իսկականի հետ ճիշտ է» մակագրությամբ պատճենը պահպանվում է սովորողի անձնական գործում), 2 լուսանկար՝ 3x4 չափսի, վկայագիր՝ «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի վերաբերյալ» տրված տարածքային կառավարման պետական մարմնի կողմից, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողին հատուկ դպրոց ընդունելու համար (վերջինս՝ առկայության դեպքում): Դպրոցը նույն օրը Դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգում հաստատում է երեխայի ընդունելությունը:
4. Համակարգի աշխատակարգը հաստատում է ՀՀ կրթության և գիտության նախարարը:

5. Համակարգի միջոցով երեխային հայտագրելու օրվանից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում սույն կարգի 3-րդ կետով սահմանված փաստաթղթերը դպրոց չներկայացվելու դեպքում հայտագրումը չեղարկվում է:

6. Ծնողը համակարգի կողմից իրեն տրված ծածկագրի միջոցով հնարավորություն ունի փոփոխել հայտագրումը: Փոփոխությունն իրականացնելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում երեխայի փաստաթղթերը դպրոց չներկայացվելու դեպքում հայտագրումը համարվում է անվավեր:

7. Դպրոցում սովորողների ազատ տեղերի քանակը սահմանվում է ՀՀ կրթության և գիտության նախարարի կողմից դպրոցին տրամադրված լիցենզիայով սահմանված տեղերի քանակին համապատասխան: